ՔԱՂՎԱԾՔ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ 05.03.2021 թ. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Նիստին ներկա խորհրդի անդամներ.

Նինո Սպանդերաշվիլի («Իվերիա» ՀԿ ներկայացուցիչ), Ռիմա Վարժապետյան, Վիլլի Վայներ, Էդուարդ Միխայլով («Պոնտի» ՀԿ ներկայացուցիչ), Մարիա Լազարևա, Գալինա Գավրիլովիչ, Իրինա Պողոսյան, Աննա Հարությունյան, Վիկտոր Վուխրեր, Մարտին Մինասյան, Աիդա Հարությունյան, Արսեն Միխայլով, Կնյազ Հասանով, Իրինա Գասպարյան

Բացակա՝ 8-ը. Լիանա Հարությունյան, Սաշիկ Սուլթանյան, Վաքիլ Ամիրյան, Ջուլետա Դոմբայան, Խդր Հաջոյան, Սերգեյ Ռաչկո, Ելենա Հակոբյան, Էթերի Ցոմայա:

Խորհրդի նախագահ՝ Սրբուհի Ղազարյան (նիստը նախագահող),

Խորհրդի նախագահի տեղակալ՝ Վարդան Ասցատրյան,

Խորհրդի քարտուղար՝ Նարինե Գուլյան:

Հրավիրված անձիք. Է. Պոլատով, Ս. Ավդալյան:

Նախապես ներկայացված նիստի օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի համաձայն՝ քվեարկության դրվեց և միաձայն հաստատվեց ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների կողմից ներկայացված հետևյալ ծրագրերն ու դրանց իրականացման համար նախատեսվող ֆինանսավորման չափերը.

1. «Աթուռ» Հայաստանի ասորական ասոցիացիա՝

«Աթուռ» ասոցիացիայի Վերին Դվին համայնքի ազգային երգ ու պարի խմբի մասնակիցների տարազների ձեռքբերում, «Աթուռ» սպորտային խմբերի մրցույթ և Ասորիների ցեղասպանությանը նվիրված միջոցառում»:

Ընդամենը՝ 48**0.000,00 ՀՀ դրամ**:

2.«Խայադթա» ասորական ֆեդերացիա» ՀԿ՝

«Միջին և բարձր դասարանների ասորերեն դասագրքերի (5-11) էլեկտրոնային տարբերակների ստեղծում» (գումարը՝ **1.049.800 ՀՀ դրամ**):

3.«Երևանի բելառուսական համայնք «Բելառուս» ՀԿ՝

«Բելառուսական մշակույթի օր» խորագրով միջոցառման կազմակերպում (գումարը՝ **420,000,00 ՀՀ դրամ**):

4.«Եզդիների ազգային միություն» ՀԿ՝

«Եզդի ընտանիքի օրացույցի տպագրում, Արցախյան պատերազմի եզդի մասնակիցների՝ հերոսների ոգեկոչող ցուցահանդես, տեսանյութի պատրաստում, Շանգալի եզդիների ցեղասպանությանը նվիրված միջոցառում Ակնալիճում:»

Ընդամենը 1,160,000 ՀՀ դրամ:

5.«Հայաստանի հունական համայնքների միություն» ՀԿ՝

«Ազգությամբ հույն երեխաների համար ամառային ճամբարի կազմակերպում» (գումարը՝ **611,300,00 ՀՀ դրամ**):

6.Երևանի «Պոնտի» հունական ՀԿ՝

«Մանկապատանեկան մշակութային ճամբարային ծրագիր, պոնտացի հույների ցեղասպանության օրվան նվիրված միջոցառում, կիրակնօրյա դպրոցի ֆինանսավորում՝ հունարեն լեզվի դասավանդմամբ»:

(գումարը՝ **1,250,000 ՀՀ դրամ**):

7.«Հայաստանի հրեական համայնք» ՀԿ՝

«Կիրակնօրյա դպրոցի կազմակերպում» (գումարը՝ **560,000,00 ՀՀ դրամ**):

8.«Ռոսիա» ՀԿ՝

«Ո՛չ պատերազմին» խորագրով մանկապատանեկան փառատոնի կազմակերպումը՝ նվիրված ՀՄՊ սկսվելու 80-ամյակին:» (գումարը՝ **600,000,00 ՀՀ դրամ**):

9.«Հարմոնիա» ռուսական մշակույթի կենտրոն ՀԿ՝

«Առնո Բաբաջանյանի 100-ամյակին նվիրված միջոցառում» (գումարը՝ **400,000 ՀՀ դրամ**):

10.«Վրացական «Իվերիա» համայնք» բարեգործական ՀԿ

«Վրացիները Հայաստանում» գրքի հրատարակում 150 հատ տպաքանակով (գումարը՝ **500,000,00 ՀՀ դրամ**):

11.«Ուկրաինա» Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա» ՀԿ՝

«Ուկրաիներեն լեզվի ուսուցման նպատակով կիրակնօրյա դպրոցի ֆինանսավորում և Սևանում Տ. Շևչենկոյին նվիրված միջոցառման կազմակերպում:

(գումարը՝ **450,000,00 ՀՀ դրամ**):

12.«Հայաստանի քրդական ազգային խորհուրդ» ՀԿ՝

«Զագրոս» և «Ռյա Թազա» թերթերի հրատարակման աջակցում, Նավրոզին նվիրված միջոցառում և Արագածոտնի մարզի քուրդ բնակչության հետ հանդիպումներ: (գումարը՝ **1,700,000 ՀՀ դրամ**):

13.«Երիտասարդ եզդիներ» ՀԿ՝

«Եզդիների Սարդարապատ-2» ֆիլմի նկարահանում» (գումարը՝ **800,000,00 ՀՀ դրամ**):

Ներկայացված և Խորհրդում հաստատված ծրագրերի ֆինանսավորման ընդհանուր գումարը կազմեց 9,981,100 ՀՀ դրամ:

Օրակարգի 1-ին հարցի համաձայն՝

Խորհուրդը միաձայն որոշեց՝

8,998,000 ՀՀ դրամը բաշխել հավասարապես խորհրդում 11 ազգային փոքրամասնությունները ներկայացնող կազմակերպությունների միջև, Խորհրդի միասնական միջոցառումների համար նախատեսվող գումարը (1,020,900 ՀՀ դրամ) փոխանցել «Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն ՀԿ հաշվին:

Նիստը նախագահող՝ Ս. Ղազարյան

Քարտուղար՝ Ն. Գուլյան